«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

**EduArmenia** կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ինչպես ներգրավել ներառական կրթություն պահանջող աշակերտին քիմիայի դասաժամին

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Ասլանյան

2023 Բայանդուր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ԳԼՈՒԽ1 ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ—6

1.1 Սեփական փորձի նկարագրում ---------- 6

1.2 Ընտանիքի կարիքները հասկանալը ----------7

1.3 Ընտանեկենտրոն մոտեցում ----------9

ԳԼՈՒԽ 2 ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Ընտանիքների հետ հաղորդակցումը----------13

2.2 Շարունակական հաղորդակցման հաստատում----------15

2.3 Հաղորդակցում պաշտոնական հանդիպումների ժամանակ—------16

2.4 Միջանձնային հարաբերությունների զարգացում----------16

2.5Ներկայությունից դեպի ներգրավվածություն----------18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------22

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հետազոտական աշխատանքը նախատեսված է հերառական խնդիրներ ունեցող երեխաների առկայության դեպքում դասակազմակերպման հարցերի լուծմանը: Կարևորվել է երեխաների ընդգրկումը դասին, նրանց հնարավորությունների օգտագործումը նյութի յուրացման համար: Նշվել է դասընկերների վերաբերմունքի ազդեցությունը այդ աշակերտների հերգրավվածության վրա դասակազմակերպման մեջ: Ներկայացվել է մեկ դասի պլան <<Ալկալիական մետաղներ>> թեմայով, որում հատկացվել են հերառական խնդիրներ ունեցող երեխաների համար հատուկ մշակված առաջադրանքներ:

Մեր հանրապետությունն այսօր համընդհանուր հերառական կրթությունը հռչակում է որպես երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք, որի նպատակը աշակերտակենտրոն մանկավարժությունն է: Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, հերառական կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց, որի նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի անհատական ունակությունների սահմաններում կրթության գործընթացին հնարավորինս մասնակից դարձնելը: Սակայն նշվածը կապված է որոշակի դժվարությունների հետ: Այստեղ ուսուցիչը պետք է համոզի երեխային, որ նա պատրաստ լինի որոշակի գործողություն կատարելու: Պետք չէ նրան ստիպողաբար կամ պարտադրաբար հերգրավել ուսման գործընթացին:Ուշնալով խնդիրներ իր դասընկերների հետ, երեխան ավելի է պարփակվում ինքն իր մեջ, ինչի հետևանքով հետագայում նրան դժվար կլինի անգամ ամենապարզ գործողությանը մասնակից դարձնել: Գործողությունը կամ գործողությունների շարքը ուսուցիչը պետք է նախապես վերլուծի, նշի քայլերի հաջորդականությունը և դրանք մատչելի կերպով բացատրի դասի ընթացքում, պետք է հետևի, որ այս աշակերտները կարողանան կենտրոնանալ դասի ընթացքին, հասնել նրան, որ այս աշակերտները կարողանան լսել և մտապահել այն ինչը իրենց համար ընկալելի է: Դրա համար ուսուցիչը մեկ, երկու անգամ աշակերտների միջոցով հատուկ անդրադարձ է կատարում այն մտքերին, որոնք ընկալելի են այս աշակերտների համար: Այնուհետև այդ միտքը պետք է կրկնել տալ նաև այս աշակերտներին: Ուսուցիչը պետք է համոզված լինի, որ իր կողմից հնչեցված հարցի պատասխանը նման երեխաների համար հեշտ վերարտադրելի է, որովհետև մեկ չընկալված բառն էլ կարող է շփոթության մեջ դնել նրանց: Լինելով անպատրաստ աշակերտը ոչ միայն տվյալ դասին , այլև հաջորդ դասերին էլ կարող է ընդհանրապես չմասնակցել, լուռ նստել, գլուխը չբարձրացնել, դասընկերոջ առօրյա ամենապարզ հարցին էլ չպատասխանել: Շատ կարևոր է, որ հերառական կրթություն պահանջող աշակերտին հանձնարարվող աշխատանքը բարձրացնի նրա ինքնագնահատականը, հետաքրքրվածություն առաջացնի դասի ընթացքի հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության զգացողություն ձևավորի նրա մեջ: Եվ միայն այս որակներին

հասնելու դեպքում ուսուցիչը կարող է ստեղծել հանդուժողականության և իրավահավասարության միջավայր դասարանի աշակերտների միջև, իսկ դա դասակազմակերպման գործընթացի կարևոր պայման է: Պետք է խուսափել երեխային այնպիսի հարցեր տալուց, որոնց նա չի կարող պատասխանել, որի հետևանքով նա կլցվի անլիարժեքության բարդույթով և կպարփակվի ինքն իր մեջ: Այս դեպքում դասարանի մյուս երեխաների համար ակնհայտ են դառնում այս երեխայի թերացումները և նրանք կվտրձեն խուսափողական դիրք գրավել դասարանում, որը նորից տանում է միջավայրի լարվածության, ինչն էլ ավելի է բարդացնում ուսուցչի հետագա աշխատանքը:

Դժվարությունը կայանում է նրանում, որ այսպիսի աշակերտներ ունեցող դասարաններում միևնույն ժամանակ ուսուցիչը պետք է աշխատի դասարանի մյուս աշակերտների հետ, առ այն, որ նրանք լինեն հանդուրժող և զուսպ, իրենց ընկերոջը ընդունեն որպես իրենց հավասարի, միևնույն ժամանակ նրանից չպահանջելով իր ուժերից վեր աշխատանքի կատարում:

Յավոք ներառական խնդիր ունեցող երեխաների որոշ ծնողներ պարզապես հրաժարվում են երեխաներին դպրոց ուղարկելուց: Ծնողի դերը կարևորվում է այնքանով որքանով որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան կրթությունը իրականացնում է ընդհանուր հանրակրթական դպրոցում համապատասխան ծրագրից դուրս չմնալով, չպարփակվելով ինքն իր մեջ: Երեխան ներառվում է հանրակրթական ուսումնական հաստատություն, առանց ընտանիքից անջատվելու, ապահովում է իր համակողմանի հասարակական զարգացումը, դառնալով դրա լիիրավ անդամ:

Հետազոտական աշխատանքի նպատակը:Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

Ճիշտ ներկայացնել նման աշակերտին դասարանին,

Բացահայտել նրա տարիքային առանձնահատկությունները,

Դրանք ճիշտ ուղղորդել և արժևորել նրա դերը ուսուցման որակի,մարդկային արժանիքների բարձրացման գործում:

Հետազոտության նպատակին հասնելու համար ըստ իս խնդիրները սրանք են՝

. ինչպե՞ս ձերբազատվեմ սովորություններից,որ ճիշտ աշխատեմ աշակերտի հետ:

.Աշակերտին ինչպե՞ս կենտրոնացնեմ դասին,ներգրավելով դասի յուրացման գործընթացին:

.Ինչպե՞ս բարձրացնեմ

կարևորությունը դասարանում ուսուցման որակի բարձրացման գործում: աշակերտի ինքնագնահատականը գործընթացին ներգրավելով դասընկերներին ու ծնողներին:

.Ինչպե՞ս ապացուցեմ նրա

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում օգտագործվել են՝ ..մանկավարժական գիտահետազոտական մեթոդներ,

..գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն,

..դիտում,զրույց,տնայց,համադրում,ընդհանրացում,համակարգում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից,ներածությունից,երկու գլուխներից,եզրակացությունից ու գրականության ցանկից:Հետազոտական աշխատանքը կազմում է 19 համակարգչային էջ:

## ԳԼՈՒԽ 1 ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

### 1.1 Սեփական փորձի նկարագրում

Մտնում եմ յոթերորդ դասարան ու անցկացնում քիմիայի անդրանիկ դաս,որն անցնում է սովորական հունով:Հաջորդիվ նկատում եմ, որ ունեմ դասին անպատրաստ,առանց տնային առաջադրանք կատարած ու ամեն ինչի նկատմամբ ամբողջությամբ անտարբեր աշակերտ,ով խուսափում է անգամ դեմքիս նայելուց: Հանձնարարում եմ դասից փոքրիկ հատվածի արտագրություն: Երեխան չի աշխատում:Հաջորդ օրը դասարան եմ տանում կազմած,գծած տետր:Առաջին հնարավորության դեպքում նստում եմ կողքին նոր դասից պարզ,միավանկ բառեր եմ գրում տետրում:Օրինակ՝

| | | |
|---|---|---|
| Պարզ | պարզ | պարզ |
| Բարդ | ---------- | --------- |
| Տարր | ---------- | ---------- |
| Մասնիկ | ---------- | ---------- |
| Նյութ | ---------- | ---------- |

Երեխային խնդրում եմ,որ միասին աշխատենք: Մեծ դժվարությամբ ստացա այն ինչ ուզում էի: Տարիներ հետո հասանք նրան, որ երեխան ինքնուրույն նախադասությունները ճիշտ արտագրում էր տետրի մեջ:Արտագրված նյութը դարձնում էի մեկ նախադասություն ու դասի ավարտին նա կարողանում էր այն վերարտադրել բանավոր:Ստորև ներկայացնեմ մեկ դասի պլանից հատված, ուր աշակերտը մասնակցեց դասի ընկալման փուլին կատարելով <<Նատրիումը սառույցի վրա>> փորձը՝ Na-ի փոխազդեցությունը սառույցի հետ:Փորձի որոշ պարզ գործողություններ կատարում է ներառական կրթություն պահանջող աշակերտը: Խմբի անդամներից մեկը սրվակից առանձնացնում և ցորենի հատկի չափով կտրատում էր

նատրիումը, իսկ ներառական կրթություն պահանջող աշակերտը դա տեղափոխում էր սառույցի վրա և ցույց տալիս: Խմբի մյուս անդամները գրում էին ռեակցիայի հավասարումը գրատախտակին և բացատրում երևույթը ( սառույցի վրա առաջանում է փոսիկ՝ ուր լողում է Na-ը, արձակելով գոլորշու շիթ): Ներառական կրթություն պահանջող աշակերտը գոհ է մնում իր կատարած աշխատանքից, ինչը նրան տալիս է վստահություն իր անձի հանդեպ: Սրանից հետո նա հաճույքով մասնակից է դառնում այլ լաբորատոր փորձերի:

Փորձ **2** և **3** <<Քիմիական <<հանելուկ >> Na-ը ջրի, թե աղաթթվի հետ արագ կփոխազդի>>

Փորձը կատարում են երկու խմբերը, մեկը ջրով, մյուսը՝ աղաթթվով: Խմբերից յուրաքանչյուրը ընտրում է ջրով կամ աղաթթվով լցված հախճապակե թասիկներից մեկը և գցում նատրիումի փոկրիկ կտորը: Գործողությունը կատարում է ներառական կրթություն պահանջող աշակերտը:Ներառական կրթություն պահանջող աշակերտին հանձնարարվել էր նաև իր հետ դասարան բերել կերակրի աղ, նկարագրել դրա ֆիզիկական հատկությունները: Ամեն դեպքում կարևոր է գնահատել ներառական կրթություն պահանջող աշակերտին, որպեսզի մեկ անգամ ևս ոգևորվի և մյուս դասերին նույնպես մասնակցություն ցուցաբերի:

Տնային հանձնարարություն տալիս ներառական կրթություն պահանջող աշակերտին նույնպես հանձնարարում եմ իր կարողություններին համապատասխան աշխատանք, այլ ոչ թե ընդհանրապես հեռու եմ պահում տնային աշխատանքից:Օրինակ.<<Հաջորդ ժամին դու բանավոր կներկայացնես փորձերը,որ կատակեցիք դասարանում>>:Իր տետրում դասարանի աշակերտներից մեկը անպայման գրում է ելանյութերն ու վերջանյութերը,շատ հակիրճ նկարագրում փորձերը:Եթե ներառական կրթություն պահանջող աշակերտին հաջորդ դասաժամին գովեստի խոսքեր էի ասում,նրա տետրում աշխատող աշակերտի աչքերը ուրախությունից փայլում էին:

Այժմ դպրոցում կա դասագիրք Ներառական կրթության ռազմավարությունները վերնագրով: Թերթում եմ այս հիասքանչ գիրքը ուր ամեն ինչ մեկտեղված է: Այսպես

**1.2** Ընտանիքի կարիքները հասկանալը

Ընտանիքի հետ աշխատելիս, էապես կարևոր է զարգացնել այնպիսի հարաբերություններ, որոնք տարբերվում են անցյալում եղած հարաբերություններից: Ներառական կրթության համատեքստում ընտանիքի և երեխայի կարիքներն ու տեսակետները կարող են բնութագրվել նրա խորապես ճանչող մասնագետների կողմից: Այս մոտեցումը ներկայումս լայն տարածում չունի, քանի որ երեխայի ընտանիքը մասնագետների կողմից լիարժեք չի ընդունվում որպես դպրոցի միջավայրի մասն ու չի արժևորում նրա

դերը: Ընտանիքի հետ հարաբերությունները հաստատելու համար կարևոր են երկխոսությունն ու սերտ շփումները: Մասնագետին կարող է հետաքրքրել, թե.

.ի՞նչն է մոտիվացնում ընտանիքին,

.որո՞նք են նրանց՝ դպրոցի կյանքի մեջ ներգրավվածությունից հետ պահող մտավախությունները,

.ինչպե՞ս է դպրոցը ընտանիքին հրավիրել մասնակցելու երեխայի կրթական գործընթացի պլանավորման գործընթացին:

Այսօրինակ հարցերն օգնում են հասկանալու և ողջունելու ընտանիքի մասնակցությունը կրթության պլանավորման գործընթացին: Դրա հետ մեկտեղ երեխային լավագույնս օժանդակելու համար, ընտանիքը պետք է ընդունի, որ երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և ցանկանա

Ներառական կրթության ռազմավարություններ Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 40

աշխատել ուսուցիչների ու այլ մասնագետների հետ: Վարքագծի նման փոփոխությունն ընտանիքի և մասնագետների համար կարող է անսովոր լինել: Այս նոր մոտեցումը և ընտանիքից, և մասնագետներից պահանջում է ժամանակ ու նպատակադրում: Day-ի (2016) Ծնողների ապրումակցման քարտեզ (էջ 41) գործիքի միջոցով մասանագետները կարող են վեր հանել այն ոչ տեսանելի թյուրըմբռնումները, որոնց պատճառով ընտանիքը չի ցանկանում մասնակցել դպրոցական կյանքին: Այս քարտեզն ուսուցիչներին հնարավորություն էտալիս ավելի լավ հասկանալու ընտանիքի պատկերացումները և ի վերջո կարող է ընտանիքին օգնել ավելի լավ հասկացված զգալուն: Քարտեզը խրախուսում է ուսուցիչներին մտածելու չորս հարցի շուրջ՝

.ի՞նչ են մտածում ու զգում ծնողները:

.Ի՞նչ են ասում ու անում ծնողները:

.Ի՞նչ են տեսնում ու լսում ծնողները:

. Ի՞նչ են ցանկանում ծնողները:

Իմ օրինակում ընտանիքը բաղկացած էր երկու տղա երեխաներից, հայրիկից ու մայրիկից: Հիմնականում աշխատել եմ մայրիկի հետ:[1]

| Ի՞նչ են մտածում ու զգում ծնողները | Ի՞նչ են տեսնում ու լսում ծնողները |
|---|---|

[1] Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 41

| | |
|---|---|
| Ի՞նչ են ասում ու անում ծնողները | Ի՞նչ են ցանկանում ծնողները |
| Ի՞նչ մտավախություններ ունեն ընտանիքները | Ի՞նչ օգուտ են քաղում ընտանիքները |

**1.3** Ընտանեկենտրոն մոտեցում

Ինչպես ասվել է, ընտանիքն իր երեխայով զբաղվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Կրտսեր դպրոցական տարիքում դպրոցի հետ ամուր հարաբերությունների հաստատումը օգնում է երեխային և նպաստում նրա ընտանիքի ու դպրոցի միջև հարաբերությունների զարգացմանը:

Հետագայում երեխայի հասունացման ընթացքում ընտանիքում արդեն ձևավորված են լինում մասնագետների հետ աշխատելու հմտություններ:Այս գործընկերությունը պահանջում է ընտանեկենտրոն մոտեցում, ինչը չի սահմանափակվում ծնողներով:Ընտանիքի վրա կենտրոնացված գործընկերություններում հանդես են գալիս տատիկները,պապիկները,ընտանիքի ընկերները (Turnbull et al., 2015): Այս գլխում, ընտանիք ասելով հասկանում ենք ավելի լայն շրջանակ:

Երեխայի կրթության պլանավորման գործընթացում ընտանիքին ներգրավելը հնարավոր է միայն մասնագետների կողմից գործընկերության հմտություններին կատարելապես տիրապետելու դեպքում: Ցանկացած գործընկերության պարագայում կարևոր են երկուստեք ուժեղ կողմերը, գիտելիքները և ռեսուրսները: Turnbull, Turnbull, Erwin, Sooda & Shogren-ի (2011) գործընկերության հաստատման և զարգացման համար առանցքային նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները՝ երկխոսության առկայությունը, փոխադարձ հարգանքը, վստահությունը, արհեստավարժությունը, հավասարությունը և հանձնառությունը: Blue-Banning, Summers, Frankland, Lordn Nelson & Begle-ը (2004) ավելացնում են նաև տվյալների գաղտնիության պահպանումը. ընտանիքը պետք է գիտենա, որ այն, ինչ իրենց ասվում է կմնա ընտանիքի հետ աշխատող թիմի մեջ: Աղյուսակ 2-ում նշված են առանցքային հանգամանքները, մասնագետների գործողությունների օրինակներ և

տեղեկատվություն այդ գործողությունների նկատմամբ վստահություն կամ անվստահություն առաջանալու վերաբերյալ:

Աղյուսակ2. Գործընկերության ստեղծումը՝ վստահություն առաջացնելու միջոցով

| Գործընկերության սկզբունքներ և գործելակերպեր | Հարցեր | Դեպի անվստահություն տանող գործողություններ | Դեպի վստահություն տանող գործողություններ |
|---|---|---|---|
| Երկխոսություն Գործընկերների միջև փոխանակվող խոսքային, ոչ խոսքային կամ գրավոր ուղերձներ.<br><br>Ցուցիչները՝<br>.ընկերական լինելը,<br>.լսելը,<br>.հստակ լինելը,<br>.ազնիվ լինելը,<br>.ինֆորմացիայի տրամադրումն ու համակարգումը: | Դուք մասնակցում եք հանդիպման կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ծնողների հետ, ովքեր խիստ ընկճված են, քանի որ իրենց երեխան ցածր գնահատականներ է ստանում և համոզված են, որ մեղքը իրենցն է: | Հանդիպման ժամանակ ընտանիքին ասել, որ տնային առաջադրանքները կատարելու ժամանակ բավարար հսկողություն չեն ապահովել և որ ցածր գնահատականների համար իրենք են մեղավոր: | Լսել ու հարցնել, թե արդյոք կուզեիր մի քանի տարբերակներ մտածել՝ իրենց երեխայի առաջընթացը խթանելու համար: |
| Հարգանք Հարաբերություններ, որոնց ժամանակ յուրաքանչյուր գործընկեր մյուս բոլորին վերաբերվում է պատկառանքով: Ընտանիքի նկատմամբ հոգատարությունն արտահայտել | Դպրոցը մշակում է ներառման ուղենիշներ և հանդիպումներ ու քննարկումներ է կազմակերպում ընտանիքների և համայնքի հետ: | Ընտանիքին ասել, որ փորձեն իրենց երեխայի ընկերների շրջանում գտնել մեկին, ով իրենց համար կթարգմանի ու կբացատրի ուղենիշները: | Խոսել դպրոցի տնօրենության հետ՝ ուղենիշների թարգմանությունապահովելու և ընտանիքին այն բացատրելը կազմակերպելու համար: |

| | | | |
|---|---|---|---|
| գործողություններով և բառերով:<br>Ցուցիչները՝<br>.հարգանքը ընտանիքի պատմության նկատմամբ,<br>.ընտանիքի ուժեղ ուժեղ կողմերի մատնանշումը,<br>.աշակերտներին և ընտանիքներին արժանապատվորեն վերաբերվելը: | | | |
| Մասնագիտական արհեստավարժություն.<br>.բարձր ակնկալիքներ սահմանելը,<br>.որակյալ կրթություն ապահովելը,<br>.շարունակական մասնագիտական կրթություն: | Աշակերտը վատ գնահատականներ է ստանում բոլոր առարկաներից, բայց ընտանիքը անհանգստություն չի ցուցաբերում: | Ասել, որ ընտանիքը չի ընդունում երեխայի կրթության առաջնահերթությունը ու դրանով միայն վնասում է նրան: | Հանդիպում ունենալ ընտանիքի անդամների հետ և փորձել բացահայտելու երեխայի հետ կապված իրենց առաջնահերթությունները տվյալ տարվա և հետագայի համար: |

| Գործընկերության սկզբունքներ և գործելակերպեր | Հարցեր | Դեպի անվստահություն տանող գործողություններ | Դեպի վստահություն տանող գործողություններ |
|---|---|---|---|
| Յուրաքանչյուր գործընկեր իրավունք ունի ընդունվող | Ընտանիքի անդամը խնդրում է հանդիպումը | Ասել ընտանիքին , որ խորհրդակցության | Ճշտել՝ արդյոք ընտանիքի համար |

| | | | |
|---|---|---|---|
| որոշումների վրա ազդելու մոտավորապես հավասար հնարավորություններ և ունակություններ<br>Ցուցիչներ[a]<br>● Լիազորությունների բաժանում, երեխայի նպատակների և ծրագրի մասին որոշում կայացնելու ընտանիքի կարծիքի հաշվի առնում,<br>● Բարենպաստ միջավայրի ստեղծում որտեղ լսում են ընտանիքին և խրախուսում կարծիք հայտնելը, նույնիսկ երբ թիմը համաձայն չէ հնչած կարծիքի հետ<br>● տարբերակների տրամադրում | կազմակերպել դասերից առաջ, որպեսզի այն իր աշխատանքային ժամերի հետ չհամընկնի: | անցկացումը դասերի ընթացքում հակասում է դպրոցի քաղաքականությանը: | ընդունելի է քննքրկումն անցկացնել հեռախոսով: |
| Հանձնառություն<br>Զգայուն լինել ընտանիքի համար հուզական հարցեր քննարկելիս:<br>Կան արդյոք դժվարություններ տանը, որոնց մասին ուսուցիչները տեղյակ չեն:<br>Ցուցիչները՝<br>.ընդառաջել ընտանիքին, ապահովել խորհրդատվությամբ, | Ընտանիքը վերջերս տեղափոխվել է այլ համայնք, և աշակերտն ու ընտանիքը ոչինչ չգիտեն նոր դպրոցի մասին: | Ենթադրելով, որ ընտանիքը հետաքրքրված չի լինի դպրոց գալու տվյալ տարվա բաց դռների օրը, հանդիպումը հետաձգել մյուս տարի: Նրանց միայնակ թողնել նոր համայնքում և դպրոցում կապեր հաստատելու գործում: | Ընտանիքին հրավիրել դպրոց. հատուկ հրավեր ուղարկել դպրոցում կազմակերպվելիք միջոցառման առիթով կամ հրավիրել աբշավի: Նախապես պայմանավորվել մեկ այլ ընտանիքի հետ՝ նոր ընտանիքի և |

| | | | |
|---|---|---|---|
| .սպասվածից ավելին անել<br>.զգայուն լինել ընտանիքի հուզական կարիքների նկատմամբ: | | | աշակերտի հետ ծանոթանալու համար: Առիթն օգտագործել նոր ընտանիքին և աշակերտին ծանոթացնելու ուրիշների հետ: |
| Վստահություն.<br>Պահպանել տվյալների գաղտնիություն:<br>Հավատալ միմյանց և համոզված լինել, որ դիմացինը լավագույնս պաշտպանում է երեխայի շահը:<br>Ցուցիչները՝<br>.հուսալի լինելը.<br>.գաղտնիություն պահպանելը.<br>.ինքներդ ձեզ վստահելը | Դպրոցի վարչական աշխատակազմը խնդրում են երեխայի ծնողներին վճարում կատրել հիմնադրամին, արտադասարանական որոշ դասերի մասնակցելու համար, բայց ծնողները վճարունակ չեն: | Ասել, որ նրանք չեն կարողանալու մասնակցել արտադասարանական դասերին, քանի որ դրանք վճարովի են: | Սահմանել դասարանի համար ներդրում կատարելու ոչ դրամական ձև: Ծնողներին ասել, որ դա իրենց ներդրումն է դասարանի համար և պահպանել գաղտնիությունը: [2] |

[2] Ներառական կրթության ուղղվարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 42-44

## ԳԼՈՒԽ 2 ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 Ընտանիքների հետ հաղորդակցումը

Հաղորդակցումն արդյունավետ է, այն դեպքում, երբ փոխանցված տեղեկությունը հասանելի է ընտանիքի անդամների համար: Հաճախ հանդուպումների ժամանակ, ընտանիքի անդամների համար ստեղծվում է տպավորություն, որ իրենք եկել են տեղեկատվություն ստանալու: Մասնագետները, հաճախ հենց այդպես էլ վարվում են փոխանցում են տեղեկատվություն երեխայի գնահատականների, ծրագրային նպատակների վերաբերյալ: Օգտագործվում է մասնագիտական բառապաշար, որը ոչ միշտ է հասկանալի ընտանիքի անդամներին: Հաղորդակցում տեղի չի ունենում: Մասնագիտական բառապաշարի օգտագործումը ծնողներին ուղղված անուղղակի ուղերձ է առ այն,որ իրենք թիմի անդամ չեն և պարզապես եկել են իրենց երեխայի մասին լսելու: Ավելին, երբեմն հանդիպմանը ներկա է լինում մասնագետների մեծ խումբ, ստեղծվում են <<մենք>> և <<դուք>> կողմեր, որոնք հաճախ հանդես են գալիս միմյանց դեմ: Ընտանիքում ստեղծվում է տպավորություն, որ իրենց կարծիքը չի գնահատվում:

Երբեմն էլ ընտանիքներն են դեմ լինում թիմում ներգրավվելուն: Նրանք չեն պատկերացնում թիմում ներգրավվելու ընթացքը, իրենց դերը երեխայի հետ իրականացվելիք աշխատանքների պլանավորման մեջ՝ կարծելով, որ դա բացառապես մասնագետի կամ ուսուցչի անելիքն է: Ընտանիք-դպրոց կապի զարգացումը, ծնողներին թիմում ներգրավելը, էական նշանակություն է ունենում, ըստ որում, հաղորդակցումն այս գործընթացի առանցքային տարրն է: Հաղորդակցման ուժեղ հմտություններ զարգացնելու համար մասնագետները պետք է ուշադիր ու ապրումակից լինելով լսեն, փորձեն հասկանալ ու կիսել ընտանիքի մտահոգությունները: Ընտանիքներն իրենց հաճախ նսեմացած են զգում, եթե գործընթացի մեջ չեն ընդգրկվում կամ չեն ըմբռնում իրենց ներկայացված տեղեկատվությունը: Թիմի համար կարևոր է փորձել հասկանալ ընտանիքի առջև ծառացած խնդիրները՝ առանց նրանց քննադատելու կամ գերհոգածություն դրսևորելու: Ընտանիքի հետ հարաբերությունները կարող են ժամանակի ընթացքում

սերտանալ, եթե ընտանիքը զգա, որ իրեն հասկանում են: Սովորաբար ծնողների և մասնագետների պատկերացումները հաղորդակցման միջոցների մասին տարբեր են : Այդ տարբերությունները լուսաբանված է աղյուսակ 3-ում , որտեղ ներկայացված են մեջբերումներ ընտանիքի անդամից և մասնագետից: Դրանցից երևում է, թե որքան տարբեր կարող են լինել միևնույն խոսակցության ընբռնումը ծնողների ու մասնագետների կողմից:

Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 45

Աղյուսակ **3.** Գործընկերության ստեղծումը՝ վստահություն առաջացնելու միջոցով

| Ծնողի ընկալումը | Մասնագետի ընկալումը |
|---|---|
| Նրանք առաջին հերթին մեզ պետք է լսեն, քանի որ մենք մեր երեխաներին ավելի լավ գիտենք, քան ուրիշ որևէ մեկը: Ուրեմն, եթե փորձեմ նրանց (մասնագետներին) մի բան ասել, ստիպված պետք է ասեմ << ԻՆՁ ԼՍԵՔ>>: | Ես սկսում եմ նրանց հետ հանգիստ ու մեղմ զրուցել: Ես նրանց բավականին տեղեկատվություն եմ տալիս: Նրանք իսկապես շնորհակալ են դրա համար, որովհետև ուրիշ ոչ ոք նրանց այդքան տեղեկատվություն չի տալիս: Հիմա նրանք ինձ վստահում են: Ես կառուցում եմ հարաբերություններ խոսելով և տեղեկատվություն տրամադրելով, ինչը նրանց համար կարևոր է: |

Ընտանիքի անդամների և մասնագետների պատկերացումները հաղորդակցման մասին կարող են իրարից խիստ տարբեր լինել: Աղյուսակ 3-ում ծնողը ցանկանում է, որ իրեն լսեն և արժևորեն, իսկ մասնագետը համոզված է, որ իր արածն էլ հենց դա է: Իր իմացած ամբողջ տեղեկատվությունը ընտանիքի անդամներին հաղորդելով՝ այս մասնագետին թվում է, թե նա հաջողությամբ հաղորդկցվում է ընտանիքի հետ: Կարծում է, թե գիտի ընտանիքն ինչ ակնկալիքներ ունի իրենից: Հաղորդակցման այս անջրպետը հնարավոր է վերացնել միայն արդյունավետ հաղորդակցման միջոցով, որի համար պահանջվում է լսել և մտածել: Հաղորդակցման չստացվելու գործում խոչընդոտ կարող է դառնալ չլսելն ու վերլուծական արձագանք չկատարելը: Կարևոր է ընբռնել ոչ միայն այն ամենն ինչ բառացի է ասվում, այլ նաև այն ամենն ինչ չի ասվում:

Վերջինս տեղի է ունենում համատեղ աշխատանքի ու փոխհարաբերությունների ընթացքում: Տեսնենք, թե ինչպես է հնարավոր փոքր փոփոխությունների միջոցով արդյունավետ հաղորդակցվել ու ամուր համագործակցային հարաբերություններ կառուցել:[3]

Աղյուսակ **4.** Ամուր հարաբերությունների հեռանկար

| Ծնողի տեսակետ | Մասնագետի տեսակետ |
|---|---|
| Անհանգստացած էի, որ երեխաս միշտ խնդիրներ էր առաջացնում դպրոցում: Գնացի դպրոց՝ ուսուցչի հետ խոսելու: Ինձ հետ զրույցին բավականաչափ ժամանակ հատկացրեց: Տանն իմ անելիքի հետ կապված խորհուրդներ տվեց: | Նկատեցի,որ հիմա ընտանիքի անդամների հետ խոսելիս շատ եմ դադար տալիս,որպեսզի լսեմ նրանց, նախքան ինքս մի բան կասեմ: Այս փոփոխությունից հետո տեսնում եմ,որ ընտանիքներն ավելի հակված են խոսելու իրենց մտահոգությունների մասին և, մեր համագործակցությունը ավելի արդյունավետ է: |

Ընտանիքների անդամների հետ համագործակցության կարևոր նախապայման է հաղորդակցման ամենօրյա, շաբաթական կամ ամսական առիթների ստեղծումը: Նման հարաբերությունների կառուցումը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով հաղորդակցվելու ԱՈԻՊ-ի կազմման կամ այլ կարևոր առիթներով կայացող հանդիպումների ժամանակ: Հաջորդիվ քննարկվում են ներառող կրթություն իրականացնելիս ծնողների հետ ամուր կապեր ստեղծելու որոշ ձևեր:

## 2.2 Շարունակական հաղորդակցման հաստատում

Սովորաբար ուսուցիչները կարծում են, թե ընտանիքի անդամները պետք է դպրոց գան միայն ԱՈԻՊ-ի մասին տեղեկատվություն ստանալու կամ երեխայի մասին մեկ այլ հարց քննարկելու համար: Նման տեսակետը խնդրահարույց է: Այսպիսի մոդելի դեպքում տեղեկատվությունը լսելուց և իրենց երեխայի ուսումնական պլանը կազմելուց հետո ծնողների անելիքն ավարտվում է: Ավարտվում է նաև երկխոսությունը: Փոխգործակցության և ուժեղ հարաբերությունների կառուցման համար պահանջվում է հաղորդակցման տեսակների կիրառում: Ընտանիքները գնահատում են իրենց հետ հաճախակի հաղորդակցումը: Երեխայի առաջադիմության և վարքի մասին ընտանիքին տեղեկացնելը էական նշանակություն ունի հարաբերությունների զարգացման գործում:

[3] Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 45

Որոշ ուսուցիչներ ընտանիքի անդամների հետ հաղորդակցվում են ամեն օր: Դա կարող է լինել հեռախոսազանգը, առցանց շփումը, կամ նոթատետրը, որի մեջ ուսուցիչը օրվա կարևոր անցուդարձի մասին ընտանիքի համար մի քանի գրառում է կատարում: Սա նաև հնարավորություն է տալիս ընտանիքի անդամներին պատասխանելու ուսուցչին՝ երբեմն էական տեղեկություն տրամադրելով սքրեսային հանգամանքների կամ իրադարձությունների մասին, որը կարող է ազդել

երեխայի ուսումնառության վրա: Հաճախակի կապը ընտանիքին հնարավորություն է տալիս ուսուցիչների հետ խոսել ոչ միայն խնդիրների, այլև հաջողությունների մասին, կամ պարզապես տեղեկանալու, որ իրենց երեխայի օրը լավ է անցել: Միայն խնդիրների մասին լսելով՝ ծնողները կարող են ձգտել քիչ առնչվել ուսուցչի հետ, ուստի կապը հետզհետե կխզվի:

## 2.3 Հաղորդակցում պաշտոնական հանդիպումների ժամանակ

Միակողմանի հաղորդակցումից երկկողմանիին անցնելու համար պետք է վերանայել հանդիպումների կառուցվածքը և ծնողներին ուղղված հրավերը: Ընտանիքին ուղարկվում է մասնակցելու, ոչ թե ներկա գտնվելու հրավեր: Սկզբում ծնողները կարող են ընտրել ավելի սահմանափակ դեր, որովհետև սովոր են հանդիպումներին լուռ մնալ, թեև որոշ ծնողներ անմիջապես կգերադասեն ավելի ակտիվ մասնակցել: Կարևոր է հիշել, որ մասնակցության հնարավորությունների տրամադրումը շատ կարևոր է հաղորդակցման ընդունված ձևը փոխելու համար: Ահա մի շարք խորհուրդներ, որոնք օգտակար կլինեն ծնողներին հանդիպումների հրավիրելիս.

.Ստեղծել բարյացակամ և հաճելի միջավայր,ծնողները սովորաբար այնպիսի զգացողություն են ունենում,որ մի կողմում իրենք են,մյուսում՝ մասնագետները:

.Ապահովել ծնողների մասնակցության արժևորումը,նրանք չեն ցանկանում մեղադրվել կատարվածների համար:

.Պահպանել տվյալների գաղտնիությունը:

. Տեղեկատվությունը հաղորդել բոլոր անդամների համար հասկանալի ձևով,զերծ մնալով միայն մասնագետների համար հասկանալի եզրույթներից:

.Գործի դնել ակտիվ լսելու հմտություններ՝ ապրումակցմամբ և առանց քննադատելու:Լսելը կարևոր է վստահություն առաջացնելու համար:

Պաշտոնական հանդիպումներում ձևավորող փոխհարաբերությունները ազդում են ինչպես ընտանիքի ներգրավվածության աստիճանի, այնպես էլ երեխայի հաջողությունների վրա:

## 2.4 Միջանձնային հարաբերությունների զարգացում

Ընտանիքների անդամների հետ դրական հաղորդակցման համար անհրաժեշտ է տիրապետել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման հմտություններին: Նման հմտությունների կատարելագործման համար պահանջվում է ինքնաճանաչում և փորձառություն: Ոչ խոսքային հաղորդակցման միջոցները՝ դեմքի արտահայտությունը, մարմնի շարժումները, միմյանց միջև փոքր տարածությունը հաճախ չգիտակցված, բայց հզոր ուղերձներ են պարունակում:[4] Կարևոր է նկատել ոչ խոսքային հաղորդակցման հուշումները, որոնք դրսևորվում են հետևյալ կերպ՝

.ֆիզիկական ազդակները, հայացքներով շփվելը,դեմքի ջերմ արտահայտությունը և միմյանց միջև մոտ տարածությունը ստեղծում են մտերմության զգացում,մինչդեռ հեռու քաշվելը,ոտքը ոտքին դրած կամ թևերը խաչած նստելը կարող են ցույց տալ դիմացինին լսելու ցանկության բացակայություն:

.լսելը. գոյություն ունեն լսելու բազմաթիվ ձևեր:Անհրաժեշտ է գնահատել՝ արդյոք ուշադիր լսում±մ եք ծնողին,թե պարզապես ձևացնում եք ,որ լսում եք:ՈԻսուցիչներն իրենք իրենց կարող են հարցնել,թե արդյոք ուշադիր լսում եմ բոլոր ասածները,թե միայն որոշ հատվածներ; Արդյո՞ք ակտիվ կերպով լսում եմ,այսինքն՝ մեկնաբանություններ եմ անում և կրկնում ասածները՝ հասկացածս ստուգելու համար:Արդյո՞ք ցուցաբերում եմ ապրումակցում՝ փորձելով հասկանալ,թե ինչ է ծնողի կամ ընտանիքի անդամի մտքում: Արդյո՝ք փորձում եմ հասկանալ նրանց տեսակետը:

Խոսքային հաղորդակցումը հաղորդակցման գործընթացի մեկ այլ կարևոր կողմն է: Ներկայացնում ենք մտապահման ենթակա մի քանի կարևոր հմտություններ:

Աղյուսակ 5. Խոսքային հաղորդակցման մոտեցումներ

| | |
|---|---|
| Վերաձևակերպումը | Ծնողի ասածի բովանդակությունը հասկանալու նպատակով բառերով պետք է վերաձևակերպել այն:Կարելի է ասել այսպես՝ <<Տեսնեմ՝ ճի՞շտ եմ հասկանում, թե ինչ եք ինձ հարցնում...>>: |
| Խթանող արձագանքը | Այն ցուցադրում Է ուշադիր լսելը և լինում է երկու տեսակի.<br>●քաջալերող, որը ներառում է այնպիսի արձագանքներ, ինչպիսիք են՝ <<Իսկապե՞ս, իսկ հետո՞...>>կամ <<Պարզ է: Իսկ հետո՞...>>: |

[4] Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 47

| | |
|---|---|
| | ●Խոսքային երկրորդում, երբ ասվածը վերածևակերպվում է՝ օգտագործելով ծնողների կողմից օգտագործած բառերը: Սա խրախուսում է ընտանիքի անդամին, որ շարունակի խոսել: |
| Ներգործող արձագանքը | Այն կարևորում է ոչ միայն ասածի բովանդակությունը, այլ նաև այն, թե ինչպես է դա ասվել: Այն խոսքի է վերածում զգացմունքներն ու վերաբերմունքը: Օրինակ՝ <<Հեղինե, դու կարծես թե ասում էիր, որ մայրիկը քեզ կօգնի ու այդ պատճառով տխրեցի՞ր>> |
| Հարցեր տալը | Բաց հարցերն ընտանիքի անդամներին դրդում են խոսելու: Օրինակ՝ <<Հիմա ի՞նչն է նպաստում, որ Միքայելը ավելի լավ աշխատի>>: Քիչ տալ այնպիսի հարցեր որոնց պատասխանը այո կամ ոչ է: Սահմանափակել այնպիսի հարցերը, որոնց պատասխանելու համար առանձնապես մտածելու կարիք չկա, օրինակ՝ <<Քանի՞ տարի է, որ Աննան սովորում է այս դպրոցում>> կամ <<Այսօր լա՞վ եք զգում ձեզ>>: |
| Ամփոփելը | Այն ներառում է ասածի կրկնությունը, կարևոր մտքերի շեշտադրումը՝ շեշտը դնելով ամենակարևոր մտքերի վրա: Ամփոփումը կարելի է սկսել այսպես. <<Եկեք իմի բերենքԱննայի մաթեմատիկայի ծրագրի մասին մեր քննարկումը>>: |

## 2.5 Ներկայությունից դեպի ներգրավվածություն

Կարելի է գործի դնել ընտանիքի անդամներին մասնակից դարձնելու բազմաթիվ ձևեր: Միայն ծնողների մասնակցության ապահովումը երբեմն շատ կարևոր նվաճում է, որը հաղորդակցումը դարձնում է փոխհարաբերություն: Հարկավոր է նկատի ունենալ ընտանիքի բոլոր անդամների մասնակցության խրախուսումը: Մասնակիցների մեջ մտնում են ինչպես ծնողները, այնպես էլ ընտանիքի մերձավոր անդամները: Այս փոփոխությունը քննարկելիս, հաճախ օգտագործվում են այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են մասնակցությունը և ներգրավվածությունը: Սոսկ մասնակցությունից դեպի նրգրավվածություն մեկ քայլ է: Այն ցույց է տալիս դեպի դիրքորոշումը ընտանիքների ներքին կարողության հանձնմանն ու նրանց թիմի լիիրավ անդամ ընդունելուն ընդառաջ: Իրենց ներգրավված զգալով՝ մարդիկ անցնում են գործի ստանալով այն ինչը ցանկանում են և ինչի կարիքն ունեն: Հաճախ ընտանիքները դպրոցում չեն ունենում ներգրավվածության զգացում և՝ իրենց անզոր զգալով՝ հեռանում են գործընթացից: Ուժեղ, զորացնող գործընկերային հարաբերությունների պարագայում մասնագետներն ընտանիքի համար ստեղծում են զարգանալու և թիմային գործընթացում ակտիվ դերեր ստանձնելու հնարավորություններ:

Մասնակցությունը ներգրավվածությամբ փոխարինելուն նպաստող, դպրոցի անձնակազմի կողմից կիրառվող մոտեցումներ: Այն օգնում է մասնագետներին առաջընթացը տարբերակել երեք մակարդակներում՝ ներկայություն, մասնակցություն և ներգրավվածություն: Ներկայության հիմնական նպատակն է՝ ծնողին օգնել, որ երեխային տեսնի որպես ներառական միջավայրի մասնիկը և գիտակցի իր դերը երեխայի կրթության գործում: Մասնակցությունը ենթադրում է ծնողների ներկայությունը դպրոցական միջոցառումներին և ժամանակ առ ժամանակ այցելությունները դպրոց՝ ծանոթանալու տարբեր մանկավարժական միջոցներին, որոնք կարող են օգտագործվել տանը՝ իրենց երեխային օգնելու համար: Ներգրավվածության փուլում ծնողները և ուսուցիչները սկսում են համագործակցել՝ միմյանց տեսնելով որպես երեխայի կրթության գործընկերներ: Ներգրավվածությունը պահանջում է բարձր մակարդակի համագործակցություն և հզորացնում է ընտանիքին, ուսուցչին ու բազմամասնագիտական թիմի մյուս անդամներին: Միաժամանակ, ներգրավվածությունը ընտանիքին հնարավորություն է տալիս զարգացնելու երեխային օժանդակելու ստեղծագործական մոտեցումները: Աղյուսակ 6-ում տրված են օրինակներ յուրաքանչյուր փուլի համար: Դպրոցներում այս ձևաչափը կարող է օգտագործվել ծնողի ներգրաբավվածությունը ապահովելու նպատակով:

Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 49

Աղյուսակ 6. Ներկայությունից դեպի ներգրավվածություն մոդելը

| | | |
|---|---|---|
| Ներկայություն Ընտանիքը հաճախում է ժողովների, որոնք անցկացնում են ուսուցիչները: | Մասնակցություն Ընտանիքը և ուսուցիչը միասին են անցկացնում ժողովը | Ներգրավվածություն Ընտանիքը ( և աշակերտը) վարում է ԱՈՒՊ –ին առնչվող ժողովը |
| Ընտանիքը ստանում է ԱՈՒՊ-ը և ստորագրում այն: | Ընտանիքը մասնակում է ԱՈՒՊ-ի մշակման համար կայացող հանդիպմանը, բայց ունենում է պասիվ դերակատարում: | Ընտանիքը մասնակում է հանդիպումներին՝ նպատակների սահմանմանը, հանդես է գալիս դիտարկումներով ,ստանում է հետադարձ կապ ու արձագանքներ£ |
| Առարկայական – Ընտանիքը տեղեկացվում է առարկայականուսումնական ծրագրի և նպատակների մասին: | Ընտանիքը դիտում է ,թե ուսուցիչն ինչպես է աշխատում երեխայի հետ: | Ընտանիքը ուսուցչի հետ քննարկում է այդ նպատակները տանն ամրապնդելու հնարավոր ձևերը: |

Ներկայությունը դեպի ներգրավվածություն մոդելը

| Ներկայություն | Մասնակցություն | Ներգրավվածություն |
|---|---|---|
| ԱՈՒՊ-ը ստորագրելուց հետո հաճախակի՝ երկու օրը մեկ ծնողը գալիս է դպրոց: | Ծնողը պասիվ կերպով է մասնակցում դպրոցական միջոցառումներին: | Տանը երեխայի տետրում գրածը փորձում է նորից վերարտադրել երեխայի հետ: |

Ամփոփելով կարող եմ ասել.այս գլուխը մասնագետներին գիտեց ընտանիքներին կրթական գործընթացում ներգրավելու համար անհրաժեշտ գիտելիքներով: Հայտնի է, որ ներառական կրթությունը զարգացնելու համար էական նշանակություն ունի ընտանիքի ներգրավումը գործընթացում: Մասնագետները քննության են առնում ընտանիքների հետ աշխատանքի ձևերը և մշակում նոր գործելաոճ: Նախկինում ընդունված մոդելից, որտեղ մասնագետներն անհերքելի փորձագետներ են, անցում է կատարում մեկ այլ մոդելի, որն արժևորում է բոլոր շահագրգիռ կողմերի ուրույն փորձագիտությունն ու դերակատարումը: Այս գլխում նկարագրվեցին ընտանիքների հետ հարաբերությունների զարգացմանն անհրաժեշտ հաղորդակցման հմտությունները ու ձևերը: Նկարագրվեց ընտանեկենտրոն մոտեցմանն անցնելու մարտահրավերը, որ ենթադրում է ընտանիքներին՝ որպես ներառական դպրոցի փորձառությունների հարստացման ակտիվ դերակատարների ուժեղացնելը:[5]

---

Խորհուրդներն ուսուցիչներին այսպիսին էր.

1. զարգացրեք փոխգործակցություն և շարունակական հարաբերություններ ընտանիքների անդամների հետ,
2. ընտանիքներին խնդրեք կարծիքներ ու առաջարկություններ ներկայացնել հանդիպումներից առաջ և հետո,
3. ընտանիքների հետ հանդիպումները անցկացրեք ջերմ մթնոլորտում
4. գործի դրեք հաղորդակցմանը նպաստող հմտություններ,
5. հաղորդակցվեք ամեն օր, կամ շաբաթական մեկ անգամ,
6. արտահայտվեք աշակերտի առաջընթացի և դժվարությունների մասին,
7. ընտանիքների անդամներին ներգրավեք դպրոցի ծնողական համայնքներում,

[5] Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 50

8. ընտանիքների անդամներին ընդունեք որպես երեխայի հարցերով զբաղվող թիմի լիիրավ անդամ,
9. դպրոցի ներսում կազմակերպեք ակումբներ՝ ուսումնամանկավարժական հարցերի վերաբերյալ միմյանց գիտելիքներ հաղորդելու համար:[6]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

[6] Ներառական կրթության ռազմավարություններ. Դասագիրք [ԳԼՈՒԽ 4] էջ 40-51

Հետազոտական աշխատանքը գրելիս նկարագրվեցին ընտանիքների հետ հարաբերությունների զարգացմանն անհրաժեշտ հաղորդակցման հմտություններն ու ձևերը, որոնք մշակվել էին մասնագետների կողմից:

Հետազոտության խնդիրները սրանք էին՝

. ինչպե՞ս ձերբազատվեմ սովորություններից,որ ճիշտ աշխատեմ աշակերտի հետ:

.Ինչպե՞ս բարձրացնեմ նրա ինքնագնահատականը գործընթացին ներգրավելով դասընկերներին ու ծնողներին,կարևորելով ծնողի և աշակերտի դերը:

Հետազոտական աշխատանքը գրելիս նկարագրվեցին ընտանիքների հետ հարաբերությունների զարգացմանն անհրաժեշտ հաղորդակցման հմտություններն ու ձևերը, որոնք մշակվել էին մասնագետների կողմից:Ներկայացվեց, որ դպրոցն ապահովում է համապատասխան մասնագետների ներկայություն,ծնողին օգնում է իր երեխային տեսնելու որպես ներառական միջավայրի մասնիկի և գիտակցելու իր դերը երեխայի կրթության գործում: Մասնագետները ճնշության են առնում ընտանիքների հետ աշխատանքի ձևերը և մշակում նոր գործելաոճ, որն արժևորում է բոլոր շահագրգիռ կողմերի ուրույն փորձագիտությունն ու դերակատարումը: Դպրոցում ծանոթանալով մասնագետ մանկավարժների մանկավարժական միջոցներին ծնողը դրանք տանը օգտագործում է իր երեխայի կրթության գործում,որն էլ բարձրացնում է իր ինքնագնահատականը:Նա կամ,թե ակամ բարձրանում է իր երեխայի աչքում:Այսպիսի արդյունքին հասնելուն անգնահատելի է դասավանդող ուսուցչի դերն ու նվիրումն իր տքնաջան աշխատանքին:Այս արդյունքին հասնելու համար առաջինն ուսուցիչն աշխատեց,աշխատեց իր առջև դրված հարցի պատասխանն ստանալու համար:

Ամփոփելով ասեմ, մեզանից յուրաքանչյուրը նախ պիտի ուզենա,ցանկանա,փնտրի լուծումներ ու հասնի ցանկության իրականացմանը:Այս ամենն ամեն ոք յուրովի է կատարում,որովհետև մենք մարդ ենք,աշխատում ենք մեզ նման զգացմունքներով օժտված մարդկանց հետ:Յուրաքանչյուր անհատ յուրովի մոտեցում է պահանջում:Այս դեպքում ես,որպես ուսուցիչ,իմ նպատակին կարողացա հասնել:Եթե աշակերտս իմանում է,որ գյուղ եմ գնալու,գալիս է կանգառ ու ժպտալով դիմավորում ինձ:Ես հասել եմ նպատակիս այս իրավիճակում:

Երբ ինձ հանձնարարվեց գրել հետազոտական աշխատանք,հիշեցի աշակերտիս ժպիտը ու որոշեցի գրել հենց այս վերնագրով:Իհարկե ես գրող չեմ,բայց փորձել եմ հնարավորինս հասկանալի ներկայացնել հետազոտությունս,որի միջով ինքս եմ անցել:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Ներառական կրթության ռազմավարություններ>> դասագիրք խմբագիրներ՝ Ռենտա Տիֆա, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ Բրայեն Հ. Էբերի, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ Քրիսթոֆոր Ջոնսթոն Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ Ալվարդ Պողոսյան, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան ներկայացուցչություն, Հայաստանի Հանրապետություն Ֆլորա Ֆրեդերիկա Հանք, << Հաշվանդամություն, կրթություն և զարգացում>> կազմակերպություն, Պորտուգալիա